

Պրոֆ. Բորիս Բաբբ (Կոնստանց, Գերմանիա)*

ԵՐԻՍԹՈՒՐՔԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Խոսք հայ ընթերցողին

Մի առիթով Ուիմսթոն Շերջիլը ցեղասպանությունը բնութագրել է իրեն «հանգագործություն առանց անոնի», իսկ 1915 թ. հայերի զարդերը նկարագրող ականատեսներից մեկը դժվարացել է բնորոշել այն, քանզի խոսքը «մի կոտորածի մասին է, որը փոխում է կոտորածի ողջ իմաստը»: 1944-ին լեհական հրեա, իրավաբան Ռաֆայել Լեմկինը կիրառեց «genocide» բառը, որը մեծ արագությամբ տեղ գտավ աշխարհի բոլոր լեզուներում և հաճախ գործածվում է իրեն «ցեղասպանություն» (գերմ. «Völkermord»-Լ.Ս.) բառի հոմանիշ**: 1948 թ. նորաստեղծ Միացյալ Ազգերն, ի վերջո, իրապարակեցին, այսպես կոչված՝

* Կոնստանցի համալսարանի պրոֆեսոր Բորիս Բաբբը 2006 թվականին իրապարակել է մի ուշագրավ աշխատություն՝ «Գենոցի: Ցեղասպանությունը 20-րդ դարում. պատմություն, տեսություններ և հակասություններ», Մյունիստն, «Բեկ» հրատարակչություն, 2006 (Boris Barth, Genozid. Völkermord im 20. Jahrhundert. Geschichte, Theorien, Kontroversen, Verlag C.H. Beck, München 2006), որի մի ենթագլուխությունը՝ «Երիտրուրքերի վարչակառօք և հայերը», նվիրված է Հայոց ցեղասպանության պատմությանը: Հեղինակը հոժարական համաձայնել է իր աշխատության այդ հատվածը հայերեն թարգմանելու մեր աշխատակցի առաջարկին և գրել է հայ ընթերցողին ուղղված իր խոսքը: Պատմագիտության հայրենիքում Գերմանիայում հրապարակված այս լուսումնասիրությունն առաջին հերթին ուշագրավ է նրանով, որ հիրավի գերմանական ճշգրությամբ, մեկ առ մեկ մերժման է Հայոց ցեղասպանության փաստը նսնացնելու, հերքելու կամ «արդարացնելու» փորձերը: Ընդունվել է տպագրության 18.09.2011: Խնդր.:

** Պրոֆ. Բորիս Բաբբը իր աշխատության մեջ 20-րդ դարում արձանագրված գենոցիդի տարերե դրսուրումներից անվիճելի է համարում ընդամենը երեքը՝ Հայոց ցեղասպանությունը, Դոլորոսը և Ռուանդայի տուցիների 1994 թ. ցեղասպանությունը: Ընդունման հեղինակը տվյալ հանցագործությունը բնորոշել է և «genocide», և «Völkermord» («Փյուկերմորդ») եզրույթներով: «Völkermord» հասկացությունը որպես «genocide» բառի համարժեք, օգտագործվել է նաև 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի գերմաներեն պաշտոնական տարրերակում: (Տե՛ս Մուշեյյան Ալեքսա, Արմեն Թեոֆիլ Վեգեները՝ «ցեղասպանություն հրավական տերմինի հեղինակ», «Ազգ» օրաբերթ-Մշակույթ, Եր., 2011, N 7, 23 ասպրիլի): Մեր կողմից հրականացված թարգմանության մեջ նույնպես պահպանվել է «Völkermord» և «genocide» եզրույթները գուգահեռ և համինաստ գործածելու սկզբունքը՝ առաջին ներկայացնելով «ցեղասպանություն», իսկ երկրորդը՝ «գենոցիդ» բառի միջոցով: Լիանա Ա. Սաֆարյան:

ցեղասպանության կոնվենցիան, ինչը կոչված է պատժի ենթարկելու և կանխելու ցեղասպանությունը, և այն ստորագրվեց աշխարհում նշանակալից դեր ունեցող գրեթե բոլոր պետությունների կողմից: Այդ կոնվենցիան սկզբունքորեն ուժի մեջ է առաջաօր: Այնուհանդերձ, այն իրենից ներկայացնում էր նաև քաղաքական բնույթի փոխազդում, իսկ որոշ ձևակերպումներ անզամ հստակ չեն կամ մեկնարամելու տեղի են տախս, մասնավորապես, երբ խնդրու առարկան անցյալի ուսումնասիրությունն է:

2006-ին երբ են գերմաներենով հրապարակեցի մի գիրք 20-րդ դարի ցեղասպանությունների մասին, իմ առաջնային նպատակն էր նախ՝ փոքր-ինչ առարկայացնել գերզգայունությամբ լցված քննարկումները, ինչպես նաև պատմականորեն հնարավորին ճշգրիտ վերլուծել, թե ինչ է իրենից ներկայացնում գենոցիդը: Եվ ապա՝ իմ նպատակը ցեղասպանությունների զարգացումն ամենայն մանրամասնությամբ նկարագրելը չէր, քանի որ այն կհանգեցներ վայրագությունների մի անեղք շրջայի:

Ովքեր ցանկանում են տեղեկություն ստանալ նացիոնալ-սոցիալիստական Գերմանիայի կողմից եվրոպացի հրեաների, Առաջին աշխարհամարտի ընթացքում հայերի, իսկ 1994-ին՝ Ռուսանդայում տուցիների նկատմամբ իրականացված ցեղասպանությունների մասին, նրանք արևմտյան գրականության մեջ կգտնեն բավականին ծավալուն ու բացառիկ մանրամասներ: Իմ պարագայում, սակայն, նպատակս էր համեմատական կարգով ներկայացնել հասարակական այն կառույցներն ու գործընթացները, որոնք անցյալում պատճառ են հանդիսացել պետական նմանատիպ հանցագործությունների համար:

Պատմաբանների, հասարակագետների, քաղաքագետների և բազում այլ գիտնականների մոտ վիճահարույց է՝ արդյո՞ք անտիկ ժամանակներում եղել են ցեղասպանություններ, թե՞ դրանք մի երևույթ են, որոնք տեղի են ունեցել միայն 20-րդ դարում: Այս քննարկումն ընթանում է հակասական փաստարկներով, և այստեղ ևս ընթերցողը կարող է գտնել համապատասխան գրականություն: Այնուհանդերձ, հատուկ պետք է նշել, որ ծայրահեղորեն բարդ է թվում ցեղասպանությունների առարկայական, սրափ ու զիտական վերլուծություն ներկայացնելը: Քննարկումներն այն հարցի շուրջ, թե արդյոք որևէ կոնկրետ դեպքում խոսքը ցեղասպանության մասին է, հաճախ ուղեկցվել և ուղեկցվում են սուր զգայունությամբ: Սկզբունքորեն՝ զուտ պատմական վերլուծությունների ընթացքում, շարունակաբար խաղի մեջ են մտնում նաև քաղաքական շահերն ու արտաքին քաղաքական գործոնները և իրենց ազդեցությունն են գործում քննարկումների վրա, չնայած այդ ընթացքում նոր հիմնավոր եզրահանգումներ չեն ձևավորվում:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության առավել ազդեցիկ պատմաբանները վաղուց արդեն կասկած չունեն այն հարցում, որ 1915 թ. Օսմանյան կայսրությունում սկզբած հայկական ջարդերը կրել են համակարգված քնույթ: Ցեղասպանության իրողությունն անվիճելի է: Այնուհանդերձ, այսօր, ինչպես անցյալում, կան մեծ քանակությամբ վիճահարույց հարցեր, որոնք վերաբերում են երիտրուք առաջնորդների կողմից որոշումների կայացման հիմքերին և ցեղասպանության անմիջական կազմակերպմանն ու մահվան երթերին: Այսօր ևս ուսումնասիրության բաց ոլորտ է այն հարցը, թե ինչպե՞ս 20-րդ դարի ընթացքում՝

հայ հասարակությունից դուրս, տարբեր երկրներում, դանդաղորեն ձևավորվեց գենոցիդի հիշողությունը: Հուսանք, որ հետազայում համաշխարհային պատմագիտությունը կանդրադառնա այս թեմաներին:

Այժմ ինձ համար մեծ պատիվ է, եթե գրքիս մի փոքրիկ հատվածը թարգման-վում է հայերեն, թեև շատ որպաս պիտի լինեի, եթե թեման այսքան տխուր չլիներ: Այսուամենայնիվ, ցեղասպանության պատմահամեմատական ուսումնասիրությունն ունի մի ուշագրավ խնդիր, որը հիմնվում է պատմական իրադարձությունների ճշգրիտ նկարագրության վրա: Անցյալում իրականացված ցեղասպանությունների վերլուծությունից, ինչ խոսք, կարելի է դասեր քաղել զալիքի համար: Աշխարհի հեռավոր անկյուններում գոյություն ունի հասարակական միահամուր կոնսենսուս այն մասին, որ նման բան այլևս երբեք չպետք է լինի: Սակայն դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե առաջին հերթին՝ պետական նմանատիպ հանցագործությունների մասին հիշողությունը մշտապես դիտվի իրքու նախազգուշացում, և ապա՝ եթե հստակ կերպով ուսումնասիրվեն այն ապակառուցողական (դեստրուկտիվ) գործնքացները, որոնք հանգեցրել են ժողովրդի բնաշնչմանը: Այստեղ այսօր էլ անհրաժեշտ են պատմաբաններ, որոնք պետք է նապատեն երեմնի քշնամի ժողովուրդների հաշտեցմանը: Հնարավոր է՝ այսօր հայկական հայացքը մի շարք հարցերում տարբերվում է գերմանացի պատմաբանի մոտեցումից, սակայն դա պետք է դառնա արդյունավետ ինտելեկտուալ երկխոսության մարտահրավեր:

Հայ ընթերցողին մաղթում եմ հետաքրքիր ընթերցանություն:

Այսուհետո Բորիս Բարք, Կոնստանցի համալսարան

* *
*

Օսմանյան կայսրությունում հայերի հետ կատարվածը միանշանակորեն պետք է որպակել որպես գենոցիդ՝ հիմք ընդունելով քազմաքիվ փաստաթրեր: Այսուհանդերձ, քուրքական պաշտոնական քաղաքականությունը, ինչպես նաև քուրք ու ամերիկացի շատ պատմաբաններ դեռ շարունակում են համառորեն վիճարկել ցեղասպանության վարկածը: Եվ դրա հետևանքով ի հայտ է եկել մի անհույս քաղաքական բանավեճ, որի ճակատները մտել են փակուղի: Այդ ընթացքում սակավադեպ չեն պատմական այնապիսի փաստերն ու աղյուրները, որոնք միտված են առաջ մնելու իրենց քաղաքական դիրքորոշումը: Եվ լրջմիտ ուսումնասիրությունը միառժամանակ դուրս է մնում ուշադրությունից, թեև հստակ խնդիրները հնարավոր կլինի պարզել միայն մանրամասն ու հիմնավորված ենտապության միջոցով:

Հարցի քննության համար հիմնական խնդիրը, որի խոր դրդապատճառները կազմում են երիտրուրքերի ծրագրած ոչնչացման քաղաքականության հիմքը, հայերի ձգտումն էր ազգային անկախության: Բնականաբար, հետազայում անհերեք կլիներ ցեղասպանության քաղաքականությունը արդարացնել այն փաստարկմամբ, որ հայերի՝ սեփական պետությունն ունենալու ձգտումը վտան-

գել է Օսմանյան կայսրության ամբողջականությունը: Անշուշտ, օսմանյան վերնախավի սուրյեկտիվ տեսանկյունից հայերի ազգային նկրտումները թաքնված սպառնալիք էին կայսրության միասնության համար: Ռուսական իմպերիալիզմն օգտագործեց հայկական ազգայնականությունը, որն առաջացել էր 19-րդ դարի վերջում, որպեսզի խաղարլի հայկական դժողովությունները Օսմանյան կայսրության դեմ: Արդեն 19-րդ դարի կեսերին հայերը քաղաքական ու մշակութային գործունեություն էին ծավալում Ռուսաստանում, իսկ ռուսական ցարերը միջազգային վեհաժողովների օրակարգում բազմից դնում էին Հայաստանի հարցը: Նման օրինակ է 1878 բվականի հունիս-հուլիսին կայացած Բեռլինի վեհաժողովը: Բեռլինյան պայմանագրում եվրոպական մեծ տերություններն ընդունեցին հայերի խնդրանքները՝ քրդերի և չերքեզների հարձակումներից պաշտպանություն ստանալու մասին¹:

Թեև 1890-ականներին և 1908-1909 թթ. օսմանյան իշխանությունները նախաձեռնել էին հայերի զանգվածային կոտորածներ, բայց այստեղ խոսքը վերաբերում էր բռնության ավանդական ձևերին, որոնք կիրառվեցին նաև Ռուսաստանում իրեաների «պողորմների» ժամանակ²: Նշյալ ջարդերի պատճառները կարելի է գտնել մի կողմից՝ հայ մտավորականության անկախության ձգտման, մյուս կողմից՝ պետության շահերի մասին օսմանյան պատկերացումների փոխադարձ դիմակայության մեջ: Հայ նոտավորական շրջանակներում 1880-ականներին միաձուլվեցին սոցիալիստական և ազգային գաղափարները: Սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի համար հայերը Օսմանյան կայսրության մեջ ընթացող բոլոր արատավոր և սխալ զարգացումների մարմնավորումն էին, քանի որ կրյալ հայերն օժանդակում էին սահմանադրական փոփոխություններին և բարեփոփոխումներին, բայց այդ՝ ակնկալում էին եվրոպական մեծ տերությունների օժանդակությունը և Ռուսաստանի կողմնակիցներն էին³: Դրանով էլ նրանք, օսմանյան իշխանությունների տեսանկյունից, փաստորեն միակողմանիորեն կորցրել էին իսլամական պետության կողմից պաշտպանված լինելու իրենց իրավունքը: Զարդերն սկսվեցին 1894-1896 թթ. Սաստում, երբ հայերը, բոլորենք բոլորերի և քրդերի կրկնակի հարկերի դեմ, մի փոքր ապստամբություն սկսեցին: Հայերն Արևմտյան Եվրոպայից հայցում էին պաշտպանություն, և հայ ազգայնականներն էլ Կոնստանտինոպոլսում գրավեցին «Բանկ Օտոռնան», որպեսզի այդ կերպ բոլորի ուշադրությունը գրավեն իրենց ժողովրդի ճնշված վիճակի վրա: Դա արդեն չափազանց էր սուլթանի և օսմանյան ղեկավարության համար, որոնք կազմակերպեցին արյունավի ջարդեր: Կոտորածները բացատրվում էին նրանով,

1 Vgl. Siyamend Othman, Kurdish Nationalism. Instigators and Historical Influences, in: Armenian Review 42, 1989, S. 39-59, hier: S.40; Naimark, Flammender Haß, S. 33.

2 Vgl. Weitz, Century of Genocide, S. 4. Mark Levine, Creating a modern «Zone of Genocide». The Impact of Nation- and State-Formation on Eastern Anatolia, 1878-1923, in: Holocaust and Genocide Studies 12, 1998, S. 393-433; Naimark, Flammender Haß, S. 34.

3 Mark Levine, Creating a modern «Zone of Genocide». The Impact of Nation- and State-Formation on Eastern Anatolia, 1878-1923, in: Holocaust and Genocide Studies 12, 1998, S. 393-433; Naimark, Flammender Haß, S. 34 f.; Smith, The Holocaust and other Genocides, S. 151; Vahakn N. Dadrian, The Armenian Genocide. An Interpretation, in: Winter, Arrierica and the Armenian Genocide, S. 52-100, hier: S. 53.

որ հայերին պետք է «իրենց տեղը» դնել: Անշուշտ, 1909-ին Աղանայում հրահրված երկրորդ մեծ ջարդը հետագա ցեղասպանության լուրջ նախադեպն էր, քանի որ հանցագործները բնավ էլ չպատժեցին իրենց կատարած ոճիրների համար⁴:

Թուրքիայում 1908-1909 թթ. խոռվություն է բարձրացնում Իրքիհաս կուսակցությունը, որը կոչվում էր նաև «Սիոնիյուն և առաջադիմություն»: Այն հշևանության եկավ իշխանափոխության երկու փորձերից հետո: Արևմտարում այս խմբավորումը հայտնի է «Երիտրուրքեր» անվանումով: Երիտրուրքերը 1902-ին տեղի ունեցած իրենց առաջին երիտրուրքական կոնգրեսից ի վեր, տարբեր խմբավորումների հիման վրա, ձևավորվեցին իրեն գործունյա և լավ կազմակերպված վերնախավ: Նրանք մեծ մասամբ ներկայացնում էին արևմտյան ազատամտության գաղափարական աշխարհի և ունեին տեխնիկական ու ռազմական լավ կրթություն: Երիտրուրքերն ամենից առաջ զանում էին արևմտյան գաղափարները հարմարեցնել օսմանյան պայմաններին: Սկզբում նրանց համար անշափ կարևոր էր Օսմանյան կայսրության խարխված դիրքերի կայունացումը, սակայն նրանց գաղափարախոսության մեջ ի սկզբանե ի հայտ եկավ ազգային պետության և նրա սահմանման խնդիրը: Դրանով ազատամիտ-լուսավորական գաղափարները բողարկված կերպով միախառնվեցին բուրքական նացիոնալիզմին⁵: Դրանից ծնված նոր ընդհանուր գաղափարախոսությունը կայսրության մյուս ժողովուրդների համար վտանգ էր ներկայացնում, քանի որ Օսմանյան կայսրությունը բազմազգ պետություն էր, ուր իշխող օսմանյան վերնախավը փորբամանական էր կազմում:

Արտաքին քաղաքականության բազմաթիվ պարտությունները նպաստեցին, որ երիտրուրքական նացիոնալիզմն Արաջին աշխարհամարտը սկսվելուց առաջ ծայրահեռորդն արմատական դառնա: 1912-ին Խոտայիան հարձակում գործեց Կիրենահիլայի վրա և գրավեց Էգեյան ծովի բուրքական կղզիները: 1912-1913 թթ. բալկանյան պետություններն անակնեալ կերպով առանձնացան, բացառությամբ Օսմանյան կայսրության եվրոպական հատվածի մի փոքր մասի: Խսկ բալկանյան երկրները մինչ այդ համարվում էին կայսրության տնտեսության կարևորագույն բաղադրիչը: Թեև Բալկանյան երկրորդ պատերազմում նոյնիսկ հաջողվեց հետ գրավել մի քանի փոքր տարածքներ, բայց և այնպես ակնհայտ էր, որ բազմազգ ու բազմակրոն Օսմանյան կայսրության վախճանը մոտ է: Միաժամանակ՝ ռազմական պարտությունների ազդեցության տակ արմատական էր դարձել երիտրուրքերի ներքին քաղաքականությունը:

Գոյություն ունի այն տարակարծությունը, թե որչա՞փ կարևորություն ունեին իրքիհասական վերնախավի գաղափարներն ու մտքերն իրենց քաղաքականության իրականացման համար, որն ազգամիջյան էր դարձնում նախորդ ներքին քաղաքական բախումները: Որոշ հեղինակներ հատկապես նշում են պանիս-

4 Vgl. Naimark, Flammender Hass, S. 3 f.; Smith, The Holocaust and other Genocides, S. 151; Vahakn N. Dadrian, The Armenian Genocide. An Interpretation, in: Winter, Arrierica and the Armenian Genocide, S. 52-100, hier: S. 53.
 5 Zur jungtürkischen Ideenwelt vgl. David Kushner, The Rise of Turkish Nationalism, 1876-1908, London 1977; Roderic H. Davison, Essays in Ottoman and Turkish History 1774-1823. The Impact of the West, Austin 1990; Masaumi Arai, Turkish Nationalism in the Young Türk Era, Leiden 1992; Sükrü Hanioglu, The Young Turks in Opposition, Oxford 1995; ders. Preparation for a Revolution. The Young Turks, 1902-1908, Oxford 2001.

լամական, մյուսները՝ պանթուրանական գաղափարները։ Զգալի համակարծություն կա այն հարցում, որ բոլքական նոր՝ առանձնահատուկ ազգայնականությունը ենթագիտակցորեն համակված էր պանխանական կամ պանթուրանական պատրանքներով։ Այդ նացիոնալիզմը կապված էր Անտողիայի հետ, որը համարվում էր բոլքիզմի ծննդավայրը և Եվրոպական Թուրքիայի կորստից հետոն՝ վերջին հենարանը։ Այս ընդհանուր գաղափարախոսությունը «Սիոնյուն և առաջադիմություն» կուսակցության գաղափարական աշխարհ ներմուծեց իրարամերժ պատկերացումներ, որոնք գտնվում էին բոլքական նացիոնալիզմից դուրս⁶։ Դեռ իր կոնգրեսի ժամանակ՝ 1910 թվականին, «Սիոնյուն և առաջադիմությունը» հասկացավ, որ փոքրամասնություններին որպես հասարակական կամ մշակութային միավորներ կազմավորելու իրենց փորձերը ձախողվել են։ Այդ ժամանակ հավանաբար սկսվեց օստոնանիզմի՝ նացիոնալիզմի և բուրքիզմի վերածվելու գործընթացը։ Կոնգրեսը հանգանակալից քննարկեց՝ ինչպես պետք է տարածել պանխանական գործունեությունը Կովկասում և Կենտրոնական Ասիայում։ Քրիստոնական հյուպատոսության գեկույցներից հայտնի է, որ դրանից հետո գործի դրվեցին լրտեսներ⁷։

Երիտրուրքական վերնախասվի վերաբերմունքն իշխանության նկատմամբ կրում էր սոցիալ-դարվինյան գաղափարների ազդեցությունը, որոնք առաջացել էին Արևմտյան Եվրոպայում նախորդ տասնամյակներին⁸։ Առաջին աշխարհամարտից առաջ «Սիոնյուն և առաջադիմություն» կուսակցության դեկավարությունը վերածվեց բռնապետական, այլատյաց ու անհանդուրժող խմբավորման, մի հանցախմբի, որը որդեգրել էր ռասխատական բացառիկության քաղաքականությունը⁹։ 1913 թ. հունվարյան խոռվությունը, որից հետո իշխանության գլուխ եկան Էնվերը, Թալեարը և Զեմալը, Իբրիհամի զարգացման տրամաբանական շարունակությունն էր, որը միտված էր բռնապետության։ Իրավիճակը սրվեց, եթե 1913 թ. հունիսին մեծ վեզիր Մահմուդ Շեքեր փաշան, որը «Սիոնյուն և առաջադիմություն» կուսակցության դրածոն էր, սպանվեց մի ընդդիմադրի կողմից։ Իբրիհամը ուժեղացրեց ահաբեկչության մթնոլորտը¹⁰։ Քայլանյան պատերազմների և Առաջին աշխարհամարտի միջև ընկած ժամանակահատվածում երիտրուրքերն ամբողջովին իրենց ձեռքում էին պահում օսմանյան պետության պահպանողական-խալամական բյուրոկրատիային և իրենց համախոհներին նշանակեցին կարևոր պաշտոններում։ 1909-1914 թթ.

6 Vgl. Gerard J. Libaridian, The Ultimate Repression. The Genocide of the Armenians, 1915-1917, in: Walliman/Dobkowski (Hg.), Genocide and Modern Age, S. 203-23 5, hier: S. 207. Zur Entstehung einer Panideologie vgl. Mihran Dabag, Jungtürkische Visionen und der Völkermord an den Armeniern in: Kristin Platt/Mihran Dabag (Hg.), Genozid und Moderne. Strukturen kollektiver Gewalt im 20.Jahrhundert, Opladen 1998, S. 152-205 Vgl. Akçam, From Empire to Republic, S. 13 3 f.

7 Vgl. Akçam, From Empire to Republic, S. 13 3 f. Vgl. Bloxham, Armenian Genocide, S. 150; Kieser/Schaller, Völkermord im historischen Raum, S. 60.

8 Vgl. Bloxham, Armenian Genocide, S. 150; Kieser/Schaller, Völkermord im historischen Raum, S. 60. Vgl.

Rouben P. Adalian, The Armenian Genocide, in: Totten/Parsons/ Charny (Hg.), Genocidi in the Twentieth Century, S. 49-96, hier: S. 50.

9 Vgl. Rouben P. Adalian, The Armenian Genocide, in: Totten/Parsons/ Charny (Hg.), Genocidi in the Twentieth Century, S. 49-96, hier: S. 50.

10 Vgl. Libaridian, The Ultimate Repression, S. 218; Dadrian, The Armenian Genocide, S. 58 f.

ընթացքում խորհրդարանական-իսլամական ցուցանակի հետևում կայացավ երիտրուրբական բռնապետությունը, որն իր ամբողջական վերահսկողության տակ վերցրեց խոշոր քաղաքները։ Օսմանյան կայսրության մուտքն Առաջին աշխարհամարտ իրականացվեց միմիայն երիտրուրբական եղիշխանության կողմից։ Թե ե՞րբ ընդունվեց այսպես կոչված՝ Հայկական հարցը վերջնակապես «լուծելու» որոշումը, հայտնի չէ, բայց Թուրքիայի՝ պատերազմին մասնակցությունը խիստ արմատականացրեց երիտրուրբերի ներքին ու ազգային քաղաքականությունը։

Թուրքացոյ բազմազգ կայսրության փոխարինումը թուրքական ազգային պետությամբ քայլայիշ հետևանքներ ունեցավ¹¹։ Եղիշխանությունը հետևում էր պանթուրքիզմի գաղափարախոսությանն այնպես, ինչպես այն ձևակերպել էին Զիյա Գյորքալփը և ուրիշ գաղափարախոսներ։ Ալլահին և սուլթանին հպատակվելը փոխարինվեց թուրքիզմի ամրողական երկրպագումով¹²։ Զ. Գյորքալփը, որը 1910 թվականից «Միություն և առաջադիմություն» կոսակցության կենտրոնական կոնժիտելի անդամ էր և երիտրուրբերի առաջատար գաղափարախոսը, գովարանում էր թուրք ջլապին զյուղացուն։ Թեև նա ամրողովով չէր հրաժարվել օսմանիզմի գաղափարախոսությունից, այնուամենայնիվ այն ավելի ու ավելի փոխարինեց պանթուրանիզմի տեսիլով՝ մի կայսրության, որը պետք է հետևեր Զինգիդ խանի օրինակին։ Զ. Գյորքալփը Նիցշեի գերմարդուն վերագրեց թուրքին։ Բոլոր գաղափարախոսները, որոնք ուզում էին փրկել կայսրությունը, հենման կետ համարեցին թուրքերի մշտական գերակայության գաղափարը¹³։ Թուրք նացիոնալիստների շարքերում կային պանթուրքիստներ, համահպատականներ և անատոլիացիներ, որոնք որպես մեծ կայսրության վերստեղծման առաջին քայլ՝ ճգոտում էին փոքր, բայց միատարր Թուրքիային։ 1913 թվականին «Միություն և առաջադիմության» հիմնական ծրագիրը ուղղորդվում էր թուրքական ծայրահետ նացիոնալիզմով, որը հարում էր նաև պանթուրանիզմի՝ Ասիայում թուրքական ռասայի միավորմանը¹⁴։

Օրեցօր ահազնացող թուրքական նացիոնալիզմի համար շարժիչ ուժ էր նորածին ազգի թշնամիների բացահայտումը։ Քաղանյան ազգերը, որոնք մի ժամանակ օսմանյան հպատակներ էին, Ռուսաստանի օգնությամբ վերջ էին տվել թուրքական իշխանությանը։ Կուսակցության պանթուրքիստական դոկտրինայի շրջանակներում երկրի ոչ մուտուլանական ազգերին պատասխանատու դարձրին տիրող ճգնաժամի համար¹⁵։ Հայերը հրաշալի կերպով համապատասխանում էին թշնամու կերպարին, քանի որ մեծ տերությունները 1914 թվականի փետրվարի 8-ին՝ երկար տարիների ճնշումից հետո, Օսմանյան կայսրությանը պարտադրեցին հայկական քարենորդումների ծրագիրը։ Այն վեց տարածքները, որտեղ բնակվում էին հայերը, պետք է վերածվեին մեկ նոր

11 Vgl. Smith, The Holocaust and other Genocides, S. 149.

12 Vgl. Richard G. Hovannisian, Etiology and Sequelae of the Armenian Genocide, in: Andreopoulos (Hg.), Genocide, S. 111-140, hier: S. 122.

13 Vgl. Dabag, Jungtürkische Visionen, S. 177-193; Naimark, Flammender Haß, S. 38; Akçam, From Empire to Republic, S. 133 f. und 138.

14 Vgl. Rubinstein, Genocide, S. 131 f.; Naimark, Flammender Haß, S. 39.

15 Vgl. Libaridian, The ultimate Repression, S. 208; Dadrian, The Armenian Genocide, S. 58; Akçam, From Empire to Republic, S. 139.

մարզի ու վերահսկվելին Եվրոպական նահանգապետի կողմից, այսինքն՝ միջազգայնացվելին: Պատերազմի սկզբից քիչ առաջ Երիտրուրքերը, սակայն, իրաժարվեցին այդ պլանից¹⁶:

Ուսումնասիրությունների մեջ կա մի դրույթ, ըստ որի, ի տարբերություն Հոլոքոսթի՝ հայերը պատերազմից առաջ պաշտոնական քաղաքականության կողմից խտրականության չին ենթարկվում: Դրա վկայությունն է այն փաստը, որ օսմանյան վերջին՝ 1914 թվականին ընտրված խորհրդարանում 259 պատգամավորներից 14-ը հայեր էին: Նույնիսկ «Միուրյուն և առաջադիմության» գլխավորած կառավարական համակարգում կային մի քանի հայեր: Միայն պատերազմի հետ միասին իրավիճակը հիմնովին փոխվեց¹⁷: Այսուամենայնիվ, Օսմանյան կայսրության՝ Առաջին աշխարհամարտին միանալուց առաջ բացահայտ ահազանգեր կային: Երիտրուրքերը կարևորագույն դաս էին քաղել Քաղաքանյան երկու պատերազմներից: Եվրոպական Թուրքիայի հանկարծահաս ուժագրկումն անհավատարիմ բնակչության կողմից մի տեսակ դաշույնի հարվածի հետևանք էր դիտվում: Նման ընթացքը կանխելու համար Առաջին աշխարհամարտն սկսվելուց առաջ արդեն միջոցառումներ էին ձեռնարկվում հայերի և հույների դեմ¹⁸: Պատերազմի սկզբին գոյուրյուն ուներ զանգվածային սպանությունների գաղտնի վտանգ, որը սրբեց այն հիվանդագին պատկերացմանը, թե հայերն ամբողջովին Ռուսաստանի կողմն են կանգնած: Գաղափարը կայծ էր վառողի տակառի մեջ¹⁹:

Հայերի ոչնչացումն իրականացվեց հասոուկ միավորումների՝ «Թեշքիլաթ-Մահուսա»-ների հսկողության ներքո: Դրանք կազմավորվել էին ռազմական գործերի նոր նախարար Էնվերի կողմից: Այդ միավորումները՝ որպես զաղտնի կազմակերպություն, անմիջականորեն հաշվետու էին կառավարությանը և պետք է կատարեին այն առաջադրանքները, որոնց ունակ չէին պետության պաշտոնական մարմինները: Դրանք ի սկզբանե հիմնվել էին Էզեյան ծովի ափերին բնակվող հույներին արտագաղթի պարտադրելու նպատակով: Այս հասոուկ միավորումների գործունեությունը պատերազմից առաջ սահմանափակվեց ֆրանսիական ուժեղ ճնշման տակ: Հատուկ միավորումները համարված էին մասամբ քրեական տարրերով և վերահսկվում էին Իթթիհատից ընտրված անձանցով: Պատերազմի ժամանակ վերջիններիս հազվադեպ էին հույների դեմ գործի դնում, և նրանց նոր գործունության ոլորտը Կովկասում հայկական գյուղերը վերացնելու էր²⁰:

1915 թվականի սկզբին Երիտրուրք դեկավարության մոտ հստակ երևում էր

16 Vgl. Naimark, Flammender Haß, S.41; Seyhan Bayraktar/Wolfgang Seibel, Das türkische Tätertrauma. Der Massenmord an den Armeniern von 1915 bis 1917 und seine Leugnung, in: Bernhard Giesen/ Christoph Schneider (Hg.), Tätertrauma, Konstanz 2004, S. 381-398, hier: S. 389.

17 Dieses Argument vor allem bei Rubinstein, Genocide, S. 132 f.

18 Vgl. Rolf Hosfeld, Operation Nemesis. Die Türkei, Deutschland und der Völkermord an den Armeniern, Köln 2005, S. 132 ff.

19 Vgl. Ternon, Der verbrecherische Staat, S. 139.

20 Vgl. Bloxham, Armenian Genocide, S. 152; Libaridian, Genocide of the Armenians, S. 205; Akçam, From Empire to Republic, S. 143fr.; Rubinstein, Genocide, S. 135; Naimark, Flammender Haß, S.41.

մեկ կարևոր և ծրագրային ուղղություն՝ հայ ժողովրդի ոչնչացման միտումը²¹: Եթե 1914-1915 թթ. քուրքական հարձակումը ռազմական դեկավարության անընդունակության պատճառով անհաջողությամբ ավարտվեց, նրանց մոտ ամրապնդվեց հայերի կողմից դրա քվացյալ վիժեցման պատրանքը: Հայ զինվորներին զինարափեցին, նրանց շահազանց վաս էին վերաբերվում բանվորական ջոկատներում: Քանի որ դրանցում կային բազմաթիվ դասալրության դեպքեր, ուժեղացավ դեկավարության մոլազարությունը: Խուրքական բանակի հայ զինվորները կամ զանգվածային գնդակահարման զրի էին դառնում, կամ սրի քաշվում²²: Կային նաև այլ դեպքեր. օրինակ՝ Սիվասում 2000-ից 2500 բանակայինների օգտագործում էին որպես հարկադիր աշխատողներ²³:

Հավանաբար՝ բոլոր հայերին վերջնակապես վերացնելու որոշումը կայացվել է Դարդանելի զգմաժամի գագարնակետին: Գալիպոլիի մոտ դաշնակիցների՝ շարաբներ շարունակված ավիհանումը սկսվեց ապրիլի 25-ին, և հետո նույն օրը քուրք դեկավարները սկիզբ դրեցին ներքին թշնամիների դեմ բռնությունների նոր փուլի²⁴: Հայերի դեմ դաժանությունները 1915-ի ապրիլի կեսին, Վանում, սկզբնավորեցին հակարութքական ապստամբություն: Մինչ այսօր այնտեղ կատարված բավարար չափով բացահայտված չէ: Հայերի գործունեությունը քուրք պաշտոնյաների դեմ երիտրութքական դեկավարության համար ծառայեց որպես հավանական ապացույց՝ հայկական ապստամբության պլանի գոյության համար, և դրանով ընթացք տրվեց լիակատար ոչնչացման ծրագրին: Վանը ծառայեցվեց իբրև արդարացում տեղահանումներ սկսելու համար²⁵:

Պայմանականորեն ցեղասպանության սկիզբ կարելի է համարել 1915 թ. ապրիլի 24-ը, եթե հայտնի հայ գրողներ, մտավորականներ, իրավաբաններ և մտածողներ ձերքակալվեցին ու կախաղան հանվեցին²⁶:

Փաստարկը, թե խոսքը «լոկ» վերաբնակեցման գործընթացի մասին է, որը դուրս էր եկել վերահսկողությունից, համոզիչ լինել չի կարող, քանի որ զանգվածային տեղահանումների հետ զրեք միաժամանակ, եթե հայկական գյուղերի բնակչությունը անլոր դաժանությունների պայմաններում Միջազգեստի անապատի մահվան ճամբարներ քշվեց, հայ մտավորականները սպանվում էին մեծ քաղաքներում: Դա պատահեց, անշուշտ, որովհետև մտավորականները հուսալի վկաններ էին, նրանք զրի կառնեին իրենց տեսած սարսափները, և ամեն

21 Vgl; Richard G. Hovannisian (Hg.), The Armenian Genocide. History, Politics, Ethics, London 1992; Ronald Grigor Suny, Looking toward Ararat. Armenia in Modern History, Bloomington 1993; Ulrich Trumpener, Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton 1968; Boris Barth, Der Völkermord an den Armeniern im Ersten Weltkrieg. Die Politik des Deutschen Reiches und die internationale Forschung, in: Geschichte in Wissenschaft und Unterricht 55, 2004, S. 319-337; Wolfgang Gust (Hg.), Der Völkermord an den Armeniern 1915/16. Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes, Springer 2005.

22 Vgl. Hosfeld, Operation Nemesis, 8. 1441.; Rubinstein, Genocide, S. 13-5; Dadrian, The Armenian Genocide, S. 64.

23 Vgl. Dadrian, The Armenian Genocide, S. 66.

24 Vgl. Jay Winter, Under cover of War. The Armenian Genocide in the context of total war, in: ders. (Hg.), America and the Armenian Genocide, Cambridge 2003, S. 37-51, hier: S. 48; Hosfeld, Operation Nemesis, S. 152.

25 Vgl. Bloxham, Armenian Genocide, S. 15-5 und 189.

26 Vgl. Adalian, Armenian Genocide, S. 53; Gilbert, Twentieth-century genocides, S. 15; ähnlich: Hirschfeld, Völkermord im zwanzigsten Jahrhundert, S. 85.

ինչ հայտնի կդառնար արտասահմանում: Այդ պատճառով նրանք կանխավ ոչնչացվեցին:

Գերմանացի և ավստրիացի ականատեսները, որոնց բռնի վերաբնակեցումները բացատրվում էին անվտանգության նկատառումներով, իսկ էին բարձրացնում, թե ինչպե՞ս կարող էին հայերը պատուհասել իրենց բնակության վայրերը. չե՞ որ զինապարտ տղամարդիկ բանակում էին, զյուղերում մնացել էին միայն կանայք, երեխաններն ու ծերերը, որոնք հազիվ թե վտանգ լինեին պետության գոյության համար²⁷:

Ուստինասիրությունների մեջ հազվադեպ է նշվում, որ պատերազմի գոտուց դուրս գտնվող հայերը չեն տեղահանվել²⁸: Սակայն այս կարծիքը կարելի է հեշտությամբ հերքել: Տեղահանումները սկսվեցին պատերազմական գոտիներում, բայց շուտով տարածվեցին Օսմանյան կայսրության ամբողջ տարածքով: Նոյնիսկ հայկական այն համայնքները, որոնք հարյուրավոր կիլոմետրեր ուղղամածակատից հեռու էին և իրենց լիովին չեզոք էին պահում, ենթարկվեցին տեղահանման և իրենց մահը գտան Միջազգետքի անապատի համակենտրոնացման ճամբարներում:

Հաճախ հիշատակվող այն փաստարկը, որ երիտրուրքերի վարչակարգը իսկական ցեղասպանություն չի իրականացրել, քանի որ սպանել են միայն այն հայերին, որոնք ապրել են Օսմանյան կայսրությունում, և այդ իսկ պատճառով բացակայում է ամբողջ ազգին վերացնելու մտադրությունը, ճշմարիտ չէ: Յարական Ռուսաստանի փլուզումից հետո բոլրական բանակը 1918-ի ամառն առաջացավ դեպի Կովկաս: Այդ ջոկատները, որոնց օժանդակում էին ֆանատիկոս աղքարեջանցիները, անմիջապես սկսեցին կոտորել հայկական բնակչությանը, թեև նման գործունեությունը խոչընդոտում էր ուղղամածան գործողություններին: Թուրքական այս նոր «սպանության և բալանի պատերազմի» մասին տեղեկությունները (Լյուդենդորֆ) հայտնի դարձան Գերմանական կայսրության մեջ և սաստիկ ցաման ալիք բարձրացրին: Բայց գերմանական Գլխավոր շտաբը 1918-ի օգոստոսին եկավ այն եզրակացության, որ պատերազմական դժվարին կացության պատճառով այլընտրանք չունեն, քան բոլրերին երաշխիքներ տալլը²⁹: Թուրքական Կովկասյան արշավանքը վա-բանկ խաղ էր, քանի որ միաժամանակ՝ բրիտանական գորքերն առաջ էին շարժվում Միջազգետքում: Դրա հիմքում ուղղամավարական ուացինալիքնը չէր, այլ պատրամքը՝ ստեղծել պանթուրանական մեծ կայսրություն, որին ամեն կերպ ձգտում էին Էնվերն ու բուրք դեկավարությունը: Ինչպես նշում էր գերմանացի մի ականատես՝ «հայերի բնաջնջման փորձը Կովկասում կապված էր հենց այդ ցանկության հետ»: Էնվերն այն կարծիքն էր, որ հայերին ժողովրդի և ուղղամածան հակառակորդի բաժանելն անհնար է, քանի որ նրանք բոլորը թշնամու կողմն են³⁰: Ժիլբերը կարծում է, որ 1918-ին Կովկասում 400. 000 հայ է սպանվել³¹:

Կոտորածները շարունակվեցին Առաջին աշխարհամարտի ավարտից հետո՝

27 Vgl. Dadrian, The Armenian Genocide, S. 62 f.

28 So Rubinstein, Genocide, S. 136.

29 Vgl. Barth, Völkermord an den Armeniern, S. 333.

30 Vgl. Hosfeld, Operation Nemesis, S. 277f.

31 Vgl. Gilbert, Twentieth-century genocides, S. 18.

մեկ այլ հանցանշանով: 1920-ին Մուսթաֆա Քեմալ Արաքսուրքի գործերը ներխուժեցին կարճատև կյանք ունեցած անկախ Հայկական Հանրապետություն: Նրանք իրկիզեցին հայկական բազմաթիվ գյուղեր ու քաղաքներ և սպանեցին մոտ 60. 000 հայերի, որոնցից շատերը եղեռնապուրծ փախստականներն էին: Երևանից ոչ հեռու նրանց կանգնեցրեց Կարմիր բանակը, և սա էլ կանխեց հայ ժողովրդի գործեր լիակատար ոչնչացում³²: 1921-1922 թթ. կենդանի մնացած հայերը, որոնք փորձում էին վերադառնալ Կիլիկիա, բռնի կերպով վտարվեցին³³:

Շունչնը և Սոսար ենթադրում են, որ հայերը փրկվելու հնարավորություն կունենային, եթե դավանափոխ լինեին, բայց դա հնարավոր չէր իրեաների դեպքում՝ նացիոնալ-սոցիալական Գեմանիայում³⁴: Բռնի մահմեղանակացված հայերի մասին թվային տվյալները տատանվում են 20.000-ի և 200.000 միջև³⁵: Նայմարկը դավանափոխության փաստի առիթով կարծում է, որ հայկական ցեղասպանությանը պակասում է Հոլոքոսթի զանգվածայնությունը: Մոտ 20.000 հայեր դավանափոխ են եղել, հայ որբերին մուսուլմանները որդեգրել են և խալամի օրենքներով դաստիարակել: Բացի դրանց՝ 250.000-300.000 հայի հաջողվեց փախչել Ռուսաստան³⁶: Շատերն էլ փրկվեցին արաբական տարածքներում: Դա հնարավոր դարձավ, քանի որ ռուսական բանակը 1915-ի սկզբում գրավել էր Օսմանյան կայսրության հայկական տարածքների մի մասը, և քուրքական հաստիկ ջոկատները չմոտեցան խաղաղ բնակչությանը:

Փաստարկներ են բերվում, որ երիտրուքերն ուզում էին բնաջնջել հայ հասարակությանը, իսկ նացիստները՝ բոլոր իրեաներին: Սրբեն Ջարցի այս փաստարկով պետք է ապացուցվի Շոահի եղակիությունն ու անմրցելի լինելը³⁷: Տեղահանման անձայր երթերից դուրս էին բերվում գեղեցիկ հայ աղջիկները՝ վաճառելու, ստրկացնելու կամ հարեմներում պահելու համար: Թուրքերի բազմաթիվ գործողությունները հիշեցնում էին ստրուկների ժամանակակից շուկաները: Այն բուրք ընտանիքները, որոնք 1918-ին փրկել էին հայ երեխաների, վերջիններին հանձնեցին ֆրանսիական զորքերին կամ հայկական համայնքին³⁸:

Այն պնդումը, որ այստեղ ցեղասպանության մասին խոսք լինել չի կարող, քանի որ իրեաների համեմատությամբ շատ հայեր կենդանի են մնացել, սին է և անընդունելի: Կային անձինք, որոնց հաջողվեց դավանափոխության միջոցով իրենց կյանքը փրկել, բայց ըստ ժամանակակից ուստιմնասիրությունների՝ դրանք բացառություն էին: Երիտրուքական տեսանկյունից կարևոր նաև այն էր, որ հայ մանուկները, որոնք հայտնվեցին մուսուլմանական ընտանիքներում, իսկ հայ կանայք, որոնք փաստորեն ստրկացվեցին, իրենց ժողովրդի համար նույնական վերաբերած էին, կարծես նրանք նույնական խեղդամահ արված լինեին: Անշոշտ, հայերի ոչնչացումն ամենախիստ էլ գերազանց կազմակերպված չէր, ինչպես

32 Vgl. Rubinstein, Genocide, S. 138; Naimark, Flammender Haß, S.55.

33 Vgl. Hovannisian, Etiology and Sequelae of the Armenian Genocide, S. 113.

34 Vgl. Chaumont, Konkurrenz der Opfer, S. 188; Mosse, Geschichte des Rassismus, S. 256.

35 Vgl. Bloxham, Armenian Genocide, S. 141 f., dort die weitere Literatur, ferner: Gilbert, Twentieth-century genocides, S. 17; Katz, Holocaust and Comparative History, S. 15.

36 Vgl. Naimark, Flammender Haß, S. 50.

37 Vgl. Kieser/Schaller, Völkermord im historischen Raum, S. 57.

38 Vgl. Hosfeld, Operation Nemesis, S. 227 und 230; Naimark, Flammender Haß, S. 58.

հրեաների սպանությունները գերմանական տիրապետության մեջ՝ սկսած 1941-ից, բայց դա ունի իր բացատրությունը. գերմանացիների տրամադրության տակ կային տեխնիկական, բյուրոկրատական և ռազմական ուրիշ միջոցներ, քան երիտրուրքների մոտ՝ 1915 թվականին:

Անհասկանալի է նաև, թե ինչքանով են կրոնական դրդապատճառները դեր խաղացել այս ցեղասպանության համար: Իվանը երիտրուրք ունկավարության համար դեր չէր խաղում: Թալեարքը, ականատեսների համաձայն, աշխույժ, բացարձակապես անկրոն և սառը, հաշվեմնկատ տղամարդ էր: Երիտրուրքները հետադեմ մահմերական արմատականներ չին: Երանք իրենց համարում էին նոր և ժամանակակից ժուրքիայի ճարտարապետներ³⁹: Ժեն կուսակցությունը 1913-ի ամռանից խրախուսում էր իվանական քաղաքականությունն արարական մարզերում այն ժամանակ, երբ բուրքիզմն իր ունկավարների քաղաքական հայացքներում արդեն գերակայում էր, բայց դա, իհարկե, ուներ միայն մարտավարական նշանակություն, քանի որ այդ կերպ մեղմացվում էին արարական հետ խնդիրները⁴⁰: Դրան հակառակ՝ Նայմարկը կարծում է, որ հայերի ցեղասպանությունը պարունակում էր ժամանակակից կրոնական հետապնդումների տարրեր: «Ուսաս և կրոնական խումք» հասկացությունները միախառնվել էին: Ուսաս և ժողովուրդը երիտրուրքների համար եղել են քափանցիկ հասկացություններ⁴¹: Կրոնական դրդապատճառները ջարերի ընթացքում գուցեն դեր չեն խաղացել ունկավարության համար, բայց ցածր խավի մոտ, որոնց մեջ իրենց եռանդուն մասնակցությունն ունեին նաև բազմաթիվ քրդեր, անտարակոյս, խաղացել են:

Քննարկվում է նաև այն հարցը, թե ինչու երիտրուրքները նման կերպ չվարվեցին իրենց տիրապետության տակ զտնվող անցանկալի այլ փոքրամասնությունների հետ: Հույներն ահավոր տառապում էին պատերազմի ընթացքում, բայց ոչ բոլորին տեղահանեցին, և նրանք էլ նախատեսված չին ոչնչացման համար: Հույների և հայերի միջև եղած կարևոր տարբերությունն այն էր, որ գոյություն ուներ հունական անկախ պետություն, որի հետ բնակչության փոխանակման մասին բանակցություններ էին վարվում դեռ 1913 թվականին⁴²:

Պատերազմի ընթացքում երիտրուրքները մի շաբթ զանգվածային հակահունական միջոցառումներ ձեռնարկեցին, որոնք բնորոշվում են որպես էթնիկ զուումներ, բայց ոչ՝ ցեղասպանություն: «Սի՛ զմեր հոյմերից» միջոցառումից հետո՝ 1914-1915 թթ. ահարեկչությունների ընթացքում, 150.000 հոյներ հեռացան Օսմանյան կայսրությունից, 50.000-ը տեղահանվեց Ներքին Անասոլիա: Ահարեկչությունն իրակացնում էր Ղուշուրաշի Էսրեֆը (Kushcubashi Esref) «Կոպիտ բռունքը» (Հոսպելի), որը հրամայել էր դատարկել հունական գյուղերը: Հատուկ ջոկատները նույնական ցանկացան բուրքական ժողովրդի «ինքնարուխ» ցասումն արտահայտել: Արտագաղթող հոյները պետք է բացատրություն

39 Vgl. Hosfeld, Operation Nemesis, S. 16; Naimark, Flammender Haß, S. 5 8; Katz, Holocaust and Comparative History, S. 8.

40 Vgl. Akçam, From Empire to Republic, S. 136.

41 Vgl. Naimark, Flammender Haß, S. 57.

42 Rubinstein, Genocide, S. 142, wirft diese Frage auf; vgl. ferner Naimark, Flammender Haß, S. 59 f.

ստորագրելին, որ իրենք ինքնակամ էին հեռանում⁴³: Մեկ այլ վտարման ու բռնության ալիք անցավ Էզքյան ծովի մոտ 1916 և 1918 թվականներին, և դա բացատրվում էր հավանական ռազմական նպատակներից ելնելով⁴⁴:

Ֆրանսիայի, Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները 1915 թ. մայիսի 24-ին միասնական հայտարարությամբ արձագանքեցին հայերի դեմ կատարված զազանություններին: «New crimes... against humanity and civilisation»-ի առիթով Բարձր Դռանը տեղեկացրին, որ դաշնակիցներն անձամբ պատասխանատվության կենքարկեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին և նրանց բոլոր հանձնակատարներին, եթե պարզ դառնար, որ վերջիններս ջարդերին մասնակից են դարձել: Թեև ԱՍՍ-ի արտգործնախարար՝ Ռոբերտ Լանսինզը, նշում էր, որ ժուրդին իրավունք ունի հայերին հանելու ռազմական գործողությունների գոտիներից, բայց նա իր դժգոհությունն էր հայտնել այդ գործողությունների անցկացման ահավոր դաժանության կապակցությամբ⁴⁵:

1919 թ. հունվարի 29-ին Լոնդոնում կայացավ մի վեհաժողով, որը հստակեց-ընց բուրք պատերազմական հանցագործների դեմ դատավարության հիմնադրույթները: Սահմանվեցին հետևյալ դրույթները՝ զինադադարի մասին համաձայնագրի խախտում, պատերազմի գերիների խոշտանգում, ռազմական գործողությունների վարելու մասին համաձայնագրի խախտում, հայերի և այլ ժողովուրդների դեմ հարձակումներ, սեփականության քալան, կողոպուտ և ավերում⁴⁶: Հայկական գենոցիդը հանգեցրեց ցեղասպանության առաջին դատավարությանը Կոնստանդնուպոլսում, թեև նշալ եղուն այն ժամանակ դեռևս ամրագրված չէր միջազգային իրավունքի տեսանկյունից:

Բրիտանական կառավարությունը 1919 թ. մեծ ճնշում էր գործադրում քուրքական նոր կառավարության վրա, որը սկզբում չէր ուզում հետաքննություն անցկացնել: Պատերազմի հանցագործների օրենքը կիրառելու մի քանի միջոցառումներ, այնուամենայնիվ, ձեռնարկվեցին, քանի որ քուրքական կառավարությունը դրանով խաղաղության ավելի լավ պայմանների հույս ուներ: Այդ պատճառով 1918 թ. դեկտեմբերի 23-ի համբողիանոր ներումը չտարածվեց պատերազմի հանցագործների վրա, իսկ 1919-ի գարնանը նոր կառավարությունն արագացրեց քրեական հետապնդումը: Բրիտանացիները փորձում էին, թեև սպարոյում, իմնել միջազգային դատարան, որը պետք է պատասխանառու լիներ պատերազմի օսմանյան հանցագործների դատավարության համար: Հունական պատերազմի դեմ բողոքի պատճառով, որն սկսվեց 1919-ի մայիսին, և որի ժամանակ քուրքեր սպանվեցին, քուրքերն ազատ արձակեցին քաղմարիվ կասկածյալների: Իրենց իշխանության տարածքում քրիտանացիները ձերքա-

43 Vgl. Hosfeld, Operation Nemesis, S. 114 und 116; Naimark Flammender Haß, S.41.

44 Vgl. Akçam, From Empire to Republic, S. 146.

45 Vgl. Taner Akçam, Armenien und der Völkermord. Die Istanbuler Prozesse und die türkische Nationalbewegung, Hamburg 2004, S. 78; Ternon, Der verbrecherische Staat, S. 23; ferner: Schabas, Genozid im Völkerrecht, S. 33; Vest, Genozid durch organisatorische Machtapparate, S. 70; Kuper, Genocide, S. 20; Smith, The Holocaust and other Genocides, S. 156; Gilbert, Twentieth-century genocides, S. 16.

46 Vgl. Akçam, Armenien und der Völkermord, S. 98.

կալեցին որոշ կասկածյալների և բերեցին Մալքա⁴⁷: Իսկ միջազգային դատարանի նախաձեռնությունը ախողվեց Ֆրանսիայի անհամաձայնության պատճառով:

1919 թ. հուլիսի 5-ին Թալեսարք, Էնվերը, Զեմալը և Նազրը իրենց բացակայությամբ մահվան դատապարտվեցին: Հաջորդ դատավարություններում թուրքական դատարանները դատապարտեցին Երիտրուրքերի ստորադաս ծառայողներին, քանի որ կարողացան ապացուցել ցեղասպանությանը նրանց մասնակցությունը: Վերջնական դատավճիռներ կայացրին պատերազմի այլ հանցագործների հանդեպ, բայց մահվան դատավճիռներ՝ միայն հիմնական դատավարության ժամանակ, երբ ապացուցվեց նրանց մասնակցությունը հայերի սպանություններին: Ընդհանուր առմամբ՝ դատարանները կայացրին 17 մահվան դատավճիռ, որոնցից ի կատար ածվեց Երեքը: Պատերազմի գլխավոր հանցագործները կարողացան փախչել, և նրանց պատասխանատվորթյան չենթարկեցին: Դատավարությունները մեծ ցույցերի պատճառ դարձան, իսկ թուրքական կառավարությունը դա համարում էր անհրաժեշտ զիջում Անտանտին⁴⁸:

Թալեսարք փաշան, որը Երիտրուրքական վարչակարգի մեծ վեզիրն ու ներքին գործոց նախարարն էր, 1921 թ. սպանվեց Բեղլինում, մի փողոցում, Երիտասարդ հայի՝ Սողոնն Թեհլերյանի կողմից⁴⁹: Վերջինիս դատավարության ընթացքում Գերմանիայի քաղաքականությունը գրադադար էր Վերին Շլեզվիխի (Սիլեզիայի - L.U.) համար պայքարով: Մեծ դատավարությունը միջազգային անցանկալի արձագանքների պատճառ կդառնար, ավելին՝ սպասվում էին պատերազմի սեփական հանցագործների դատավարությունները Լայպցիգում⁵⁰: Հայերի սպանությունների մասին հանրային քննարկումը կանխվեց նենագափոխված դատավարությամբ, և Թեհլերյանն իրավաբանական հնարքով ազատ արձակվեց⁵¹: Թալեսարքի սպանությամբ հայերի կողմից սկսվեցին սիստեմատիկ վրեժինության գործողություններ՝ Նեմեսիս անունով: Հաջորդ տարիներին կատարվեցին այլ սպանություններ Երիտրուրքական նախկին առաջնորդների դեմ. 1921 թ. դեկտեմբերի 6-ին Հռոմում սպանվեց նախկին մեծ վեզիր Սահդ Հալիմը, 1922 թ. Բեղլինում Թեհաւեղին Շաքիրը՝ թուրքական հատուկ ջոկատների նախկին դեկավարը, իսկ 1922 թ. հուլիսի 21-ին Զեմալ փաշան և Նուարաք Բեյը սպանվեցին Թրիլիսիում՝ մի գրոսանքի ժամանակ⁵²:

47 Vgl. Akçam, Armenien und der Völkermord, S. 77, 83 ff. und 108.

48 Zu den Prozessen vgl. ferner: Vahagn N. Dadrian, A Textual Analysis of the Key Indictment of the Turkish Military Tribunal Investigating the Armenian Genocide, in: Armenian Review 44, 1991, S. 1-36; Annette Höss, The Trial of Perpetrators by the Turkish Military Tribunals. The Case of Yozgat, in: Hovannisian, Armenian Genocide, S. 208-221; zu weiteren Prozessen vgl. Akçam, Armenien und der Völkermord, S. 104 und 107.

49 Der Täter, Soromon Tehlerjan, gab im Prozeß an, die Massaker nur knapp überlebt zu haben. Demgegenüber nimmt Hosfeld, Operation Nemesis, S. 23 f., 26 und 301 an, daß Tehlerjan Bestandteil der Operation Nemesis gewesen sei, die eine systematische Vergeltungspolitik betrieben hätte. Tehlerjan kämpfte als Angehöriger eines armenischen Freiwilligenbataillons auf russischer Seite.

50 Vgl. Hosfeld, Operation Nemesis, S. 19.

51 Tessa Hofmann (Hg.), Der Völkermord an den Armeniern vor Gericht. Der Prozeß Talaat Pascha, Göttingen, 3. Auflage 1980; Akçam, Armenien und der Völkermord, S. 109.

52 Vgl. Hosfeld, Operation Nemesis, S. 25 und 302 ff.

Յեղասպանության համար պատասխանատուների հետապնդումն անհնարին դարձավ Սերձավոր Արևելքում նոր պատերազմների, Աքարուրի ապստամբության և հոյների ու բուրքերի միջև արյունալի երթիկ ընդհարումների պատճառով։ Անզիական քաղաքականությունն այլևս չէր փորձում նոր բնորոշումներ տալ հայկական կոտորածներին։ Յեղասպանությունը համարվում էր պատերազմի հանցագործություն, բայց ոչ մի կասկած չկար, որ խոսքը առանձնահատուկ ծանր հանցագործության մասին է, որը պատժելի է առանց ներման։

Մինչև հիմա թիշ է հետազոտված՝ միջազգային իրավունքի և Ազգերի լիգայի քննարկումների վրա ազդեցություն ունեցա՞ն արդյոք 1920-ականների այս դատավարությունները և ինչպիսի՞ն էր այդ ազդեցությունը, կամ ինչպե՞ս նման քննարկումները նախադեպ ստեղծեցին հետազա որոշումների համար։ Ռաֆայել Լեմկինի ստեղծածը նշան էր այն բանի, որ քննարկումների մակարդակով՝ միջազգային իրավունքի մեջ տեղի ունեցավ խնդրի արծարծման մի գործընթաց, որի մասին մինչ այժմ թիշ բան է հայտնի։

Երիտրուրքների կառավարության ցեղասպանական քաղաքականությունը երթեր չի ճանաչվել։ Փաստորեն, բուրքական քաղաքականությունը 1923 թ. Լոզանի պայմանագրով միջազգային ընդունելություն գտավ։ Դրան նպաստեց այն, որ Եվրոպական քաղաքական բազմարիկ գործիչներ հիմնում էին Մուսաֆիա Քեմալով, որն ավարտին հասցրեց Առաջին աշխարհամարտից հետո Օսմանյան կայսրության փոխակերպումը բուրքական ազգային պետության։ ԱՄՆ-ը միանանակորեն վարում էր ազգային շահերի պաշտպանության քաղաքականությունը, երբ իր կառավարությունը 2000 թ. հոկտեմբերի 19-ին հսկայական ազդեցություն գործեց Ներկայացուցիչների պալատի վրա՝ կանխելու համար Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը։ Թուրքիան համարվում էր ուազմավարական անհրաժեշտ գործընկեր, և նրան պետք էր խնայել⁵³։

Այս աջակցությունը մինչ այժմ հնարավորություն է տալիս բուրքական կառավարությանը հերքել ցեղասպանությունը և հետապնդել այն լրագրողներին, որոնք նման թելայրանքին չեն հետևում։ Թուրքական արխիվներում պատմական անկախ հետազոտություններն այս թեմայի շուրջ մինչ օրս նույնապես խափանվում են, և անհնար է ակնկալել, որ ինչ-որ բան կփոխվի առաջիկայում։ Այդ պատճառով գրի տեսանկյունից հետազոտության համար վիրխարի նյութեր են տրամադրված, ավելին, քան Հոլոքոսթի դեպքում, բայց դեռևս բացակայում է հանցագործների տեսանկյունը։

Այնուամենայնիվ, արտասահմանում գոյություն ունեն բավականաշափ նյութեր, որոնց հիման վրա գենոցիդի մեղադրանքը միանչանակորեն հնարավոր է ապացուցել։ Դեռ ամերիկացի դեսպան Մորգենթաուն պատերազմի ժամանակ Թալեաք փաշայի հետ գրույցներից եկավ այն եզրակացության, որ երիտրուրքները մտադրություն ունեն ոչնչացնել ամբողջ հայ ժողովրդին։ 1918 թվականին հրատարակված հիշողությունների վերջում նա գրում է. «Երբ բուրքական իշխանություններն այս տեղահանումների հրամանը տվեցին, դրանով մի ամբողջ ժողովրդի մահվան դատավճիռ կայացրին։ նրանք դա լավ հասկանում էին, և ինձ

53 Vgl. Kieser/Schaller, Völkermord im historischen Raum, S. 38 und 60.

հետ ունեցած զրոյցներում դա ամենին էլ չէին թաքցնում»⁵⁴:

Կենդանի մնացած հայերի հիշողությունների կողքին գերմանալեզու աղբյուրները նյութերի կարևորագույն հավաքածու են ցեղասպանության ուսումնասիրության համար, փաստ, որը հաճախ անգլո-ամերիկյան զրականության մեջ բավարար ուշադրության չի արժանացել: Նախապատերազմյան ժամանակաշրջանի տնտեսական, քաղաքական և ռազմական սերտ կապերի և պատերազմում դաշինքի պատճառով 1915 թվականին գերմանացի ու ավստրիացի մեծ քիով քաղաքացիներ գտնվում էին Օսմանյան կայսրությունում, մարդիկ, որոնք դարձան սպաննի և տեղահանումների ականատեսը: Քազմարիվ քիչկներ, միսիոներներ, բուժքուրեր, գինորականներ, ինժեներներ, մասնագետներ, բանկերի ներկայացուցիչներ, արևելագետներ և այլ գիտնականներ դարձան դեպքերի խոսուն վկանները, որոնք Գերմանիա էին ուղարկում մանրամասն տեղեկություններ ջարդերի մասին: Այս ստվարածավալ աղբյուրները մինչ օրս հետազոտողների կողմից ենթարկվել են միայն նախնական մշակման:

Այն դեպքում, երբ Հիտլերը դարձել է ժամանակակից պատճության ամենահայտնի դեմքերից մեկը, մինչ օրս «Սիոնիզմ և առաջադիմության» կառավարության պարագլուխներին ճանաչում են սույն մասնագետները: Այս անանունությունը նպաստեց նրան, որ հայկական ջարդերն արևմտյան հասարակության մեջ դարձան քիչ հայտնի: Մեծ հանցագործությունները պահանջում են մեծ հանցագործներ, և երբ այդ հանցագործներն ակնհայտ չեն, հանցաները քիչ կարևորելու միտում է առաջանում⁵⁵:

Պաշտոնական Թուրքիան երբեք լրջորեն չի զբաղվել Օսմանյան կայսրության այս վերջին փուլով: Դրա փոխարեն հորինվում է մի պատմություն, որն ուղղված է հանրային մտացածին անկողմնակալությանը, այն է՝ հայկական տեսանկյունը համեմատել թուրքականի հետ: Դրա հետևում բաքնված է հակաֆաստարկների հորինումը, որ հայերն ու երիտրուրբերը եղել են հակամարտության հավասար կողմեր: Ժամանակակից Թուրքիայի հիմնադրման միջքը 1919-ից՝ 1921 թթ. անկախության համար շարժումը մեկնարանում է որպես ազգային-ազատագրական պայքար՝ ուղղված նվորական իմակերիականի դեմ: Այս հիմքի վրա էլ հայերի տեղահանումները ներկայացվում են որպես անհրաժեշտ միջոցառում հայրենիքը փրկելու համար:

Թեև հետագայում պաշտոնանկ երիտրուրբերին գուցեն հնարավոր էր գենոցիդի համար պատասխանատու համարել, բայց հանցագործներն արդեն այն հակառակորդ վերնախավի անդամներն էին, որոնք 1923 թ. Աքարտուքի դեկավարությամբ ստեղծեցին ժամանակակից Թուրքիան: «Սիոնիզմ և առաջադիմության» բազմարիվ նախնին անդամներ, որոնք պատասխանատու էին տեղահանումների և ջարդերի համար, մասնակցեցին ժամանակակից թուրքական հանրապետության հիմնադրմանը: Այդ պատճառով մեղքի ճանաչումը կսասաներ հորինված պատմությունը և նոյնիսկ՝ ժամանակակից Թուրքիայի ինքնությունը: Իրավիճակը բոլորովին այլ է, քան 1949-ից հետո՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում: Նաև Աքչամն է նշում, որ Աքարտուքի դերը խոչընդոտում

54 Zitiert bei Naimark, Flammender Haß, S. 53.

55 Vgl. Rubinstein, Genocide, S. 141 f.

Է, որ ժամանակակից Թուրքիայում կարողանա տեղ գտնել հայկական գենոցիով⁵⁶:

Այդ պատճառով, մինչ օրս թուրքական պաշտոնական քաղաքականությունը վարում է երկու ռազմավարություն՝ կամ հայկական գենոցիով հերքելու, կամ նրան մեկ այլ նշանակություն տալու: Կառավարության կողմից պատվիրված մեծ բվով հրապարակումներն ել մի դեպքում պնդում են, որ հետապնդումներ ընդհանրապես չեն եղել, մյուս դեպքում հայտարարվում է, որ հայերն Անտանի կողմնակից ընդդիմադիրներ են, որոնք պետք է չեզոքացվեին⁵⁷: Տերնոնը շափազանց դիպուկ է բնորոշել թուրքական արդարացումների անհերետությունն ու տրամարանության հակասականությունը. «Ոչինչ էլ չի պատահել, բայց նրանք դրան արժանի են»⁵⁸:

Թարգմանություն՝ բանաս. զիտ. թեկնածու
Լիանա Ա. Սաֆարյանի

THE YOUNG TURK REGIME AND THE ARMENIANS

Prof. Boris Bart (Konstanz, Germany)

56 Vgl. Bayaktar/Seibel, Das türkische Tätertrauma, S. 382 und 392 ff.; Akçam, From Empire to Republic, S. 8 und X.

57 Vgl. an Rechtfertigungsschriften z. B.: Generaldirektorat der Staatsarchive des Amtes des Ministerpräsidenten (Hg.), Armenian Violence and Massacres in the Caucasus and Anatolia based on Archives, Ankara 1995; Hüsamettin Yıldırım, Armenische Behauptungen und die Wahrheit, Ankara 2001, streitet grundsätzlich die Morde ab; Mim Kemal Oke, The Armenian Question 1914-1923, Oxford 1988, befaßt sich ausführlich mit armenischem Separatismus und Terrorismus.

58 Vgl. Ternon, Der verbrecherische Staat, S. 152.